ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի նիստի
«05» դեկտեմբերի 2019թ., ժ. 11:00

Օրակարգ

1. «Կանանց աջակցման կենտրոն» հկ-ի կողմից ներկայացված առաջարկների փաթեթի ներկայացում
   զեկուցողներ՝Մարո Մաթոսյան, Հասմիկ Գևորգյան, Նոնա Գալստյան, Ալվարդ Կարապետյան

2. Քննարկում

Մասնակցեցին՝

Ժաննա Անդրեասյան	ՀՀ սոցիալական և աշխատանքի հարցերի փոխնախարար, Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի նախագահ
Գայանե Հովակիմյան	ՀՀ արդարադատության նախարարություն «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի վերականգնողական ծրագրերի իրականացման հարցերով տնօրենի տեղակալ
Գայանե Ավագյան	ՀՀ առողջապահության նախարարություն աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ
Քրիստինա Սարգսյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության վերապատրաստման և կարողությունների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ
Անահիտ Մուրադյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության

Նաիրա Պետրոսյան	վարչության գլխավոր մասնագետ, «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի սոցիալական աշխատող
Լիանա Սարգսյան	«Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի ծրագրի պատասխանատու ղեկավար
Մերի Դավթյան	«Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի սոցիալական աշխատող
Մարիամ Ապերյան	«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Շուշանիկ Իսրայելյան	ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչության պետի տեղակալ
Սեդա Ղալթախչյան	«Երևանի աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Նելլի Դուրյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
Տաթևիկ Աղաբեկյան	«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպության ծրագրերի ղեկավար
Մարո Մաթոսյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
Լառա Ահարոնեան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության համանախագահ
Տաթևիկ Կարապետյան	«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող
Կարինե Դավթյան	«Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպության նախագահ
Մարինե Ղալեչյան	«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Սոֆի Բոստանչյան	ՀՀ սոցիալական և աշխատանքի հարցերի նախարարության ընտանիքի կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության առաջատար մասնագետ

Հասմիկ Գևորգյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Ալվարդ Կարապետյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Նոնա Գալստյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Ընտանիքում բռնության ենթարկված քաղաքացի	

Ժ. Անդրեասյանը հանդես եկավ բացման ելույթով և ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցը՝ կարևորելով այն հանգամանքը, որ նիստ հրավիրելու առաջարկով հանդես են եկել հասարակական սեկտորի ներկայացուցիչները: Ժ. Անդրեասյանը ներկաներին իրազեկեց նախարարության կողմից կատարված ընթացիկ աշխատանքների մասին, նշելով, որ «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով դրամաշնորհի տրամադրման համար արդեն իսկ հայտարարվել է մրցույթ, որով նախատեսվում է բոլոր մարզերում ունենալ ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար աջակցման կենտրոններ և դրամաշնորհի հայտարարություն է տրվել նաև «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ տարածքում ունենալ 2 ապաստարան: Շրջանառության մեջ է դրվել նաև ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկա պահին ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության քննարկմանը:

1. Խոսքը փոխանցելով Մ. Մաթոսյանին՝ Ժ. Անդրեասյանը խնդրեց զեկուցել նիստի քննարկման առարկա հանդիսացող հարցերը: Տիկին Մաթոսյանը նշեց, որ օրենսդրական դաշտում կան դեռևս չհստակեցված բաց դրույթներ, որոնք գործնականում հանգեցնում են տարբեր խնդիրների: Մինչև հիմնական խնդիրներին անդրադառնալը, խոսքը փոխանցվեց ընտանիքում բռնության ենթարկված քաղաքացուն, որը ամուսնու կողմից ենթարվել էր բռնության: Ընտանիքում բռնության ենթարկված քաղաքացին, ներկայացնելով իր անձի նկատմամբ կիրառված բռնության դեպքը, փորձեց մատնանշել գործնականում հանդիպած այն խնդիրները, որոնց առնչվել է իր դեպքի հետ կապված: Նա նշեց, որ բռնանարը՝ իր նախկին ամուսինը, հանդիսանալով ոստիկանական համակարգի աշխատակից, օգտվելով իր ծառայողական դիրքից՝ միշտ կարողացել է խուսափել պատասխանատվությունից և չնայած այն հանգամանքին, որ երկու անգամ նրա նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշում են կայացրել, սակայն նա

փաստացի հաշվառված չէ առ այսօր: Նա՝ որպես զոհ նշեց, որ իր ամուսնու նկատմամբ կիրառված անհետաձգելի միջամտության ժամկետը եղել է ընդհամենը 2 օր, ինչը շատ քիչ է: Ուստի առաջարկեց օրենքում առկա անհետաձգելի միջամտության համար սահմանվող դրույթի ժամկետը փոփոխել: Նա նշեց նաև, որ ոստիկանական համակարգում դեպքի վերաբերյալ ցուցմունքներ տալու համար առանձնացված սենյակ չի եղել և համապատասխան հարցաքննման ընթացքը օպերատիվ կերպով չի կազմակերպվել և համապատասխան աշխատակիցները չեն ցուցաբերել անհրաժեշտ կոմպետենտության մակարդակ: Ն. Դուրյանը անդրադառնալով դեպքին՝ ներկայացրեց մանրամասները: Պատրաստակամություն հայտնեց նաև, խորհրդի նիստից հետո, դեպքի առնչությամբ բռնության զոհի հետ քննարկի խնդիրը և ցուցաբերի իր լիազորություններից բխող հնարավոր աջակցությունը: Տիկին Դուրյանը ևս համակարծիք եղավ անհետաձգելի միջամտության կիրառման ժամկետի փոփոխման հետ: Ներկաները քննարկեցին նաև ոստիկանության կողմից ընտանիքում բռնության դեպքին տրվող արձագանքի և աշխատանքի կազմակերպմանը վերաբերող հարցերն ու դրանց հնարավոր լուծումները:

Հաջորդ խնդիրը ներկայացրեց Ն. Գալստյանը, ինչը վերաբերում էր հոգեկան հիվանդություն ունեցող, սակայն անգործունակ չճանաչված անձանց նկատմամբ պաշտպանության որևէ միջոց չկիրառելու հարցին: Ն. Դուրյանը նշեց, որ խնդիրը համակարգային է, վերաբերում է տարբեր պատասխանատու կառույցներին և անհրաժեշտ է գտնել մեկ միասնական լուծում: Այնուհետև հավելեց, որ խնդիրը կարող է կարգավորվել համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելով:

2. Բարձրացված 2-րդ խումբ հարցերը առնչվում էին քննչական մարմին կողմից կատարված աշխատանքներին: Տիկին Անդրեասյանի առաջարկով հարցի քննարկումը հանվեց օրակարգից՝ տեղափոխելով հաջորդ նիստի օրակարգ, քանի որ նիստին չէր մասնակցում քննչական մարմնի պատասխանատու աշխատակից, որը առկա խնդիրների վերաբերյալ պետք է տար համապատասխան պարզաբանումները:
3. Հաջորդ խնդիրը, որն առնչվում էր դատախազության համակարգին, ներկայացվեց Ն. Գալստյանի կողմից: Նա նշեց, որ Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ դատախազն իրավունք ունի քրեական գործ հարուցել, եթե առկա է տուժողի անօգնական վիճակը կամ հանցանք կատարողից կախվածություն ունենալու փաստը, ինչը փաստում է, որ նման դեպքերում պրակտիկայում դատախազը իրավունք ունի հրավիրել բռնության ենթարկված անձին հարցաքննության և եթե վերոգրյալ փաստերը վեր հանվեն, ապա քրեական գործ կհարուցվի: Սակայն երբեմն դատախազության աշխատակիցները հարցաքննության են հրավիրում տուժողին, չնայած այն հանգամանքին, որ առկա է բռնության ենթարկված անձի բողոքը:

   ՀՀ դատախազության ներկայացուցիչը համակարծիք եղավ խնդիրը բարձրացնողի այն մտքին, որ ընտանիքում բռնության ենթարկված յուրաքանչյուր անձի չէ, որ պետք է դատախազն ընդունի, այլ, որպես կանոն, ընտանիքում բռնության ենթարկելու մասնավոր մեղադրանքի դեպքերում, եթե բացակայում է դիմողի բողոքը: Նա հավելեց, որ պատրսատ է լրացուցիչ

քննարկել ներկայացնողի կողմից մատնանշած՝ բողոքի առկայության պայմաններում ենթադրյալ բռնությունից տուժածին ընդունելության հրավիրելու դեպքերը:

4. Հաջորդ խնդիրը վերաբերում էր առողջապահական համակարգին, ինչը ներկայացվեց Հ. Գևորգյանի կողմից, նա նշեց որ ԸԲ ենթարկված անձանց և նրանց երեխաների համար պահանջվող անվճար բժշկական ծառայությունների ապահովումը հաճախ խնդիր է լինում, քանի որ նրանք հաշվառված են լինում այլ վայրում, իսկ գտնվելով ապաստարանում, համապատասխան տարածքային բուժհաստատությունից հնարավորություն չեն ունենում օգտվել անհրաժեշտ ծառայություններից: Առողջապահության նախարարության ներկայացուցիչ Գ. Ավագյանը համակարծիք լինելով բարձրացված խնդրի հետ, նշեց, որ գործնականում խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կատարել նախարարի հրամանում համապատասխան փոփոխությունները, որպեսզի ապաստարանը ևս սպասարկվի՝ ըստ իր գտնվելու վայրի տարածքային բուժհաստատության կողմից: Այս փոփոխության շրջանակներում կլուծվի նաև դատաբժշկական փորձաքննության շրջանակում պահանջվող հիմնական և լրացուցիչ հետազոտությունները համատեղ և նույն հաստատությունում կազմակերպելու հետ կապված խնդիրները և անհրաժեշտ չի լինի դիմելու այլ հաստատություն վճարովի ծառայությունից օգտվելու համար:
5. Հաջորդ խնդիրը վերաբերում էր կրթական համակարգին, հարցը ներկայացվեց Հ. Գևորգյանի կողմից, նա նշեց, որ ապաստարանում գտնվող ԸԲ ենթարկված անձանց երեխաների պատշաճ և ապահով կրթության կազմակերպման գործընթացում հանդիպում են բազմաթիվ խնդիրների, մասնավորապես երեխայի գտնվելու վայրի կոնֆիդենցիալության խնդրին, քանի որ երեխայի դպրոցից համապատասխան տեղեկանք վերցնելիս, պետք է անպայման նշեն այն հասցեն, թե որտեղ է երեխան տեղափոխվում: Կրթության նախարարության ներկայացուցիչ Ա. Մուրադյանը առաջարկեց նման դեպքերում, դիմել նախարարության համապատասխան խնդրով զբաղվող աշխատակցին՝ հանձինս իրեն, և նախարարությունը կտա խնդրին համապատասխան լուծումներ:
6. Մյուս հարցը վերաբերում էր ապաստարնում գտնվող և գրանցում չունեցող շահառուներին ընտանեկան նպաստ տրամադրելու հետ կապված խնդիրներին, որը ներկայացվեց Ա. Կարապետյանի կողմից: Խնդրի լուծմանն անդրադառնալով՝ Ժ. Անդրեասյանը նշեց, որ արդեն իսկ կատարվել են համապատասխան իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները, ինչի արդյունքում պետական ռեգիստրում հաշվառում չունեցող անձիք կարող են գրանցվել սոցիալական ծառայության տարածքային մարմնի հասցեով և ստանան համապատասխան աջակցությունը:
Ա. Կարապետյանը նշեց նաև, որ կան դեպքեր, երբ անձը ստանում է ընտանեկան նպաստ, սակայն հարկադրված թողնում է բնակարանը, ապա նման պարագայում կասեցվում է նպաստի տրամադրումը: Առաջարկ արվեց, որպեսզի այս դեպքերի հետ կապված ևս կատարվեն համապատասխան փոփոխությունները, որպեսզի ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող նպաստը, ապաստարանի տրված տեղեկանքի հիման վրա,

բնակության վայրը ժամանակավոր տեղափոխվելու դեպքում չդադարեցվի: Ժ. Անդրեասյանը նշեց, որ խնդիրը կքննարկեն և կտան համապատասխան լուծումները:

7. Ելույթով հանդես եկավ նաև Քրիստինա Սարգսյանը, որն առաջարկեց՝ որպես հաջորդ նիստի քննարկման հարց դիտարկել ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրազեկվածության ցածր մակարդակին վերաբերող խնդիրը: Նշեց, որ խնդիրն արդիական է և այս մասով անելիքները շատ են: Ժ. Անդրեասյանը ևս համակարծիք լինելով բարձրացված խնդրին՝ նշեց, որ հաջորդ նիստի օրակարգում կընդգրկվի բարձրացված հարցը:

Ամփոփելով նիստը, առաջարկվեց՝

1. ՀՀ ԱՍՀ նախարարությանը՝ ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում կատարել անհետաձգելի միջամտության կիրառման ժամկետի սահմանման փոփոխություն, այն է՝ խմբագրել օրենքի հետևյալ դրույթը՝ «Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը»:
2. ՀՀ ոստիկանությանը՝ համապատասխան իրավական ակտում կատարել փոփոխություն՝ ընտանիքում բռնության դեպքերի արձագանքման և բռնության ենթարկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Կազմակերպել նաև անհրաժեշտ վերապատրաստման դասընթացներ համակարգի աշխատակիցների համար:
3. ՀՀ ԱՆ և ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներին՝ համատեղ քննարկել հոգեկան հիվանդություն ունեցող, սակայն անգործունակ չճանաչված անձանց նկատմամբ պաշտպանության որևէ միջոց կիրառելու հարցի իրավական լուծումները և խորհրդին ներկայացնել խնդրի լուծման հնարավոր տարբերակները:
   Կանանց աջակցման կենտրոնին՝ իր իսկ նախաձեռնությամբ ևս մեկ անգամ կազմակերպել հարցի վերաբերյալ քննարկում՝ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:
4. Քննչական մարմնին վերաբերող հարցերը տեղափոխել հաջորդ նիստի օրակարգ:
5. ՀՀ ԱՆ նախարարությանը՝ նիստի ընթացքում բարձրացված առողջապահական համակարգին վերաբերող խնդիրների լուծման վերաբերյալ կազմակերպել քննարկում և կատարել հարցերի լուծմանն առնչվող համապատասխան իրավական փոփոխությունները:
6. ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ կարևորելով ընտանիքում բռնության ենթարկված երեխայի անվտանգության և բնակության վայրի գաղտնիության պահպանման հարցը՝ կազմակերպել քննարկում՝ ընտանիքում բռնության ենթարկված երեխայի համար դպրոցների կողմից տրվող տեղեկանքի տրամադրման հատուկ ընթացակարգ սահմանելու և

գործնականում առնչվող ոլորտային նմանատիպ խնդիրներին հնարավոր լուծումներ գտնելու համար:

7. ՀՀ ԱՍՀ նախարարությանը՝ քննարկել ընտանեկան բռնության ենթարկված անձին, բնակության վայրը ժամանակավոր տեղափոխվելու հանգամանքով պայմանավորված, տրամադրվող ընտանեկան նպաստի չդադարեցման գործընթացը կարգավորող մեխանիզմները և տալ լուծումներ:

Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի նախագահ՝ **Ժ. Անդրեասյան**